ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄԻ ՆՈՐ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՎԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կանոնակարգի 49-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՈՐՈՇԵՑ.

Հաստատել ՀՀ սահմանադրական դատարանի անդամի նոր հատուկ համազգեստի նկարագրությունը և ձևը (կցվում են)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 ապրիլի 2008 թվականի
ՍԴԱՈ-41

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄԻ ՆՈՐ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամները նիստի ժամանակ կրում են հետևյալ համազգեստը.

1. Մուգ կապույտ կտորից պատմուճան, օձիքը և թևքերը՝ բորդո (մուգ կարմրագույն) կտորից։
2. ՀՀ ՍԴ նախագահի պարագայում՝ համազգեստի աջ ուսից դեպի ներքև ձգվող մուգ կապույտ գույնի տարբերակիչ ժապավեն, որի ներքևի հատվածում բորդո (մուգ կարմրագույն) կտորից 10 սմ շերտով հավելում։